Հաստատված է
«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
հիմնադիրների 05.05.2023թ. ժողովի կողմից
«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
գլխավոր տնօրեն՝ Անահիտ Շաքարյան

«Ինվիա Ինվեսթմենթս»

փակ բաժնետիրական ընկերության

Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման կանոններ

Բովանդակություն

1. Հասկացություններ 3
2. Հաճախորդի կողմից Պատվերների ներկայացման կարգը 3
3. Գործարքների կնքման և կատարման կարգը 4
4. Գործարքների գրանցումը 5
5. Պատվերների կատարման քաղաքականությունը 6
6. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը 6
7. Եզրափակիչ դրույթներ 7

«Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման կանոնները մշակված են Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան և կարգավորում են Ընկերության կողմից արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքների կատարման գործընթացը:

Ընկերությունը արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները կատարում է բացառապես իր հաճախորդներին արժեթղթերով բրոքերային-դիլերային գործարքների կատարման շրջանակներում և սույն կանոններով սահմանված կարգով իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործարքները պետք է նախորդեն հաճախորդի կամ Ընկերության հաշվին արժեթղթերի առքի, հաճախորդի բրոքերային հաշվից ընկերությանը հասանելիք միջնորդավճարի գանձման կամ հաճախորդի հանձնարարությամբ իրեն պատկանող դրամական միջոցները հաճախորդին վերադարձնելու գործառնություններին:

1. Հասկացություններ

1.1. Ստորև նշված հասկացությունները սույն կանոներում կիրառվում են ստորև նշված իմաստներով.

«Ընկերություն». «Ինվիա Ինվեսթմենթս»

«Օրենք». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

«Արտարժույթ». «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցները:

«Հաճախորդ». անձ, որը օգտվում է Ընկերության մատուցած ծառայություններից:

«Բրոքերային գործարք». Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արտարժույթով կատարվող գործարք:

«Դիլերային գործարք». Ընկերության հաշվին և Ընկերության անունից արտարժույթով կատարվող գործարք:

«Պատվեր». արտարժույթով գործարքների կնքման նպատակով ներկայացվող Հաճախորդի հանձնարարականը:

«Սպասարկող բանկ». բանկ, որում Ընկերությունը ունի դրամային և արտարժութային հաշիվներ:

«Բորսա». «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ:

«Ներքին գործարք». արտարժույթի առքի կամ վաճառքի գործարք, որի կողմերն են Ընկերությունը և Հաճախորդը:

«Արտաքին գործարք». արտարժույթի առքի կամ վաճառքի գործարք, որում գործարքի մի կողմը Ընկերությունն է կամ Հաճախորդը, իսկ մյուս կողմը որևէ երրորդ անձ է:

2. Հաճախորդի կողմից Պատվերների ներկայացման կարգը

2.1. Հաճախորդի համար և նրա հաշվին արտարժույթով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն մինչև տվյալ գործարքի կնքումը Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերը:

2.2. Հաճախորդի կողմից Պատվերները ներկայացվում են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի հաստատած ձևով:

2.3. Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող Պատվերը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին թե տվյալ պատվերը ներքին գործարքի կատարման Պատվեր է, թե Արտաքին գործարքի կատարման պատվեր:

2.4. Հաճախորդը Պատվերները ներկայացնում է, դրանցում փոփոխություններ է կատարում կամ պատվերները հետ է կանչում Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված կարգով:

3. Գործարքների կնքման և կատարման կարգը

3.1. Արտարժույթով բրոքերային գործարքներ կատարելիս Ընկերությունը պետք է՝

3.1.1. համոզվի, որ գործարք կատարելու համար Պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,

3.1.2. այլ հավասար պայմաններ ունեցող Պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե Պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և

3.1.3. Հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում Հաճախորդի Պատվերի ճշգրիտ կատարումը:

3.2. Հաճախորդի ներկայացրած պատվերները պետք է կատարվեն մինչև տվյալ պատվերի ներկայացման օրվան հաջորդող օրվա ավարտը: Եթե այդ ժամկետում հնարավոր չի լինում կատարել Պատվերը համապատասխան փոխարժեքի բացակայության պատճառով, ապա Պատվերը համարվում է դադարեցված:

3.3. Հաճախորդի՝ արտարժույթի գնման պատվերի կատարման արդյունքում ստացված արտարժույթային գումարը Հաճախորդի հայեցողությամբ կարող է թողնվել Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա կամ վերադարձվել Հաճախորդին, ինչի մասին պետք է նշում պարունակվի Հաճախորդի պատվերում:

3.4. Եթե Հաճախորդը ցանկություն է հայտնել ետ ստանալ Պատվերի կատարման արդյունքում գնված արտարժույթային գումարը, ապա այն պետք է վերադարձվի Հաճախորդին Պատվերի կատարման օրվան հաջորդող երեք բանկային օրերի ընթացքում:

3.5. Հաճախորդի Պատվերները կատարվում են Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա առկա միջոցների սահմաններում:

Ներքին գործարքներ

3.6. Հաճախորդի պատվերի հիման վրա ներքին գործարքները կատարվում են Հաճախորդի՝ Ընկերությունում ունեցած դրամական միջոցների հաշվում համապատասխան գրառումներ կատարելու (գործարքը գրանցելու) միջոցով:

3.7. Ներքին գործարքների կատարման նպատակով Ընկերությունը սահմանում է իր կողմից արտարժույթի առքի և վաճառքի փոխարժեքներ՝ առնվազն ըստ յուրաանչյուր այն արտարժույթի, որով Ընկերության Հաճախորդներից որևէ մեկը ունի դրամական միջոցներ: Ներքին գործարքները կատարվում են բացառապես վերը նշված փոխարժեքներով:

3.8. Եթե Հաճախորդը պատվիրել է կատարել Ներքին գործարք, սակայն Ընկերությունը չունի տվյալ գործարքը կատարելու համար բավարար դրամական միջոցներ, ապա Ընկերությունը կարող է Հաճախորդի Պատվերը կատարել Արտաքին գործարքի միջոցով:

3.9. Ներքին գործարքի կատարման համար Ընկերությունը Հաճախորդից միջնորդավճար չի գանձում:

Արտաքին գործարք

3.10. Արտաքին գործարք կատարելիս ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Ընկերությունը կարող է համախմբել իր Հաճախորդի Պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ Հաճախորդի Պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե՝

3.10.1. որևէ Հաճախարդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա Պատվերը կատարվեր առանձին,

3.10.2. ընդհանուր առմամբ այն բխում է Հաճախորդի շահերից:

3.11. Եթե Ընկերությունը իր Հաճախորդի Պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված Պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին:

3.12. Ընկերության Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության Դիլերային գործարքների նկատմամբ:

3.13. Արտաքին գործարքները ընկերությունը կարող է կատարել ինչպես Բորսայում, այնպես էլ Սպասարկող բանկերի միջոցով: Հաճախորդի պատվերների կատարման վայրը ընտրելիս Ընկերությունը ղեկավարվում է Ընկերության պատվերների կատարման քաղաքականությամբ:

3.14. Բորսայում գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և Բորսայի կողմից սահմանված կանոնների համաձայն:

3.15. Սպասարկող բանկի միջոցով գործարքները կատարվում են այդ բանկին փոխարկման հանձնարարական ներկայացնելու միջոցով, որի ձևը, ներկայացման ու կատարման գործընթացը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և տվյալ բանկի ներքին կանոնակարգերով:

3.16. Եթե հնարավոր չի լինում Հաճախորդի պատվերը կատարել Բորսայում, կամ այն կատարվում է մասնակիորեն, ապա այն կամ դրա չկատարված մասը պետք է կատարվի Սպասարկող բանկերի միջոցով:

3.17. Արտաքին գործարքի կատարման դեպքում Հաճախորդից գանձվում է միջնորդավճար, որի մեծությունը որոշվում է Ընկերության «Բրոքերային (դիլերային) գործունեության կանոններ»-ով սահմանված սկզբունքներով և կարգով:

4. Գործարքների գրանցումը

4.1. Ընկերությունը գրանցում է Հաճախորդի պատվերով կատարված արտարժույթի առքի կամ վաճառքի ցանկացած գործարք:

4.2. Կատարված գործարքի մասին գրանցումները կատարվում են Հաճախորդի Պատվերը կատարելուց հետո՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

4.3. Սույն կանոնի 4.1. կետի համաձայն կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

4.3.1. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և(կամ) Հաճախորդին նույնականացնող համարը,

4.3.2. գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով օրը, ամիսը և տարին,

4.3.3. Գնվող և վաճառվող արժույթները (ISO կոդը)

4.3.4. փոխարժեքը,

4.3.5. Գործարքի գումարը,

5. Պատվերների կատարման քաղաքականությունը

5.1. Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությունը հաստատվում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից:

5.2. Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությունը ներառում է տեղեկատվություն գործարքների կնքման տարբեր վայրերի (միջոցների) մասին, ինչպես նաև այն գործոնների մասին, որոնք հաշվի են առնվում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս:

5.3. Ընկերությունը պետք է Հաճախորդներին տեղյակ պահի Պատվերների կատարման քաղաքականության մասին և ստանա Հաճախորդի նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

5.4. Ընկերությունը վերանայում է Պատվերների կատարման քաղաքականությունը այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ քաղաքականության համաձայն ընտրված՝ գործարքների կնքման վայրի միջոցով կատարել հաճախորդի Պատվերները Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:

6. Հաճախորդներին հաշվետվությունների ներկայացումը

6.1. Եթե Ընկերությունը կատարել է հաճախորդի Պատվերը, ապա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հաճախորդին տրամադրի Պատվերի կատարման մասին հաշվետվություն:

6.2. Հաճախորդի Պատվերի կատարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է՝

6.2.1. Ընկերության անվանումը,

6.2.2. Հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,

6.2.3. Գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,

6.2.4. Հաճախորդի կողմից տրված Պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),

6.2.5. Գնվող և վաճառվող արժույթները (ISO կոդը),

6.2.6. Փոխարժեքը,

6.2.7. Գործարքի գումարը,

6.2.8. Գանձվող միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),

6.3. Սույն կանոնի 6.1. ենթականոնով սահմանված հաշվետվությունը ներկայացվում է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևով:

6.4. Եթե հաճախորդի Պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը հաճախորդին է ներկայացնում Պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

6.5. Սույն կանոնի համաձայն հաճախորդին ներկայացվող հաշվետվությունը պետք է՝

6.5.1. ներառի հաշվետվության ներկայացման ամսաթիվը,

6.5.2. վավերացված լինի Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված անձի ստորագրությամբ և Ընկերության կնիքով:

6.6. Սույն կանոնով սահմանված հաշվետվությունները հաճախորդին ներկայացվում են առձեռն հանձնելու կամ Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով հաճախորդին ուղարկելու միջոցով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն կանոններով սահմանված կարգով հաճախորդի կողմից ներկայացվող Պատվերները և հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները կարող են լինել հայերեն, իսկ հաճախորդի ցանկության դեպքում՝ այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն):

7.2. Սույն կանոնների փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում Ընկերության ինտերնետային կայքում հրապարակման պահից, ինչը պետք է իրականացվի իրավասու մարմնի կողմից հաստատման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.3. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում Ընկերության պետական գրանցման պահից: